ԶԻՆԱՊԱՀ®

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԻԱՍԻՆ՝ ԶԻՆՎՈՐԻՍ ԿՈՂՔԻՆ...

2026Թ. 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

DONATE

zinapah.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- **ԶԻՆԱՊԱՀԻ կառավարումը և ֆինանսական վերլուծությունը**
  - Կառավարման մարմինը և գործադիր թիմը
  - Զարգացում և ֆինանսական անկախություն
  - Ամփոփ պատմությունը, առաքելությունը, տեսլականը և արժեքները
  - Գլխավոր գործադիր տնօրենի ուղերձը
  - Գործառնությունները 2017 – 2026թթ.
  - Շահառուները և վճարված հատուցումները
  - Շահառուներին միտված աջակցման ծրագրեր և համագործակցություն
- **2025թ. աուդիտորական հաշվետվություն**

Կառավարման մարմինը և գործադիր թիմը

ԶԻՆԱՊԱՀ
ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հոգաբարձուների խորհուրդ

Իրինա Սեյլանյան
Խորհրդի նախագահ

Անահիտ Ադամյան
Խորհրդի անդամ

Արմեն Քոչարյան
Խորհրդի անդամ

Դավիթ Հակոբյան
Խորհրդի անդամ

Հասմիկ Եղյան
Խորհրդի անդամ

Ժոզեֆ Սիմոնյան
Խորհրդի անդամ

Լարա Չոլակյան
Խորհրդի անդամ

Թիմ

Կարինե Սարգսյան
Գլխավոր գործադիր տնօրեն

Կարեն Սահակյան
Ներքին աուդիտ

Գոհար Աբրահամյան
Գործառնական տնօրեն

Արմինե Վարդանյան
Ֆինանսական տնօրեն

Սմբատ Սահյան
Հատուցումների գծով տնօրեն

Լիլյա Գրիգորյան
Հանրային կապերի և հաղորդակցության տնօրեն

Մարիանա Հարությունյան
Ծրագրերի ղեկավար

Հրաչիկ Ավթանդիլյան
Հատուցումների համակարգող

Արփինե Զարգարյան
Սոցիալական ծրագրերի համակարգող

Ֆելիքս Չիլինգարյան
Պորտֆելի կառավարիչ

Լիլիթ Ղաբուզյան
Հաշվետար

Վազգեն Մարտիրոսյան
SS ծրագրի մենեջեր

Մարի Բոյաջյան
Գնումների և դրոշմ. վճարների վերադարձի համակարգող

Ռիմմա Հարությունյան
Ադմինիստրատիվ օգնական

ԶԻՆԱՊԱՀԻ ամփոփ պատմությունը, առաքելությունը, տեսլականը և արժեքները

ԶԻՆԱՊԱՀ

Զինծառայողների ապահովագրության ազգային հիմնադրամը հիմնադրվել է 2017թ.՝ ապահովելու կայուն հատուցումներ՝ զոհված և անհայտ բացակայող զինծառայողների ընտանիքների, ինչպես նաև ծանր և խորը ֆունկցիոնալ սահմանափակմամբ (1-ին և 2-րդ խմբի զինհաշմանդամություն ունեցող) զինծառայողների բարեկեցության ապահովմանը, ովքեր պաշտպանել են հայրենիքը և նրա սահմանները՝ ապագա սերունդների խաղաղության և անվտանգության համար:

ԶԻՆԱՊԱՀԸ ապաքաղաքական կառույց է, կառավարվում է **անկախ Հոգաբարձուների խորհրդի կողմից** և գործում է համաձայն **ՀՀ օրենքի**:

ԶԻՆԱՊԱՀԸ եզակի հիմնադրամ է տարածաշրջանում, որի շրջանակներում Հայաստանի յուրաքանչյուր աշխատող քաղաքացի պարտադիր վճար է կատարում իր աշխատավարձից: ԶԻՆԱՊԱՀԸ համահայկական նախաձեռնություն է, որի նպատակն է ապահովել կյանքը և առողջությունը հանուն Հայաստանի անվտանգության զոհաբերած զինծառայողների և նրանց ընտանիքների բարեկեցությունը:

ԶԻՆԱՊԱՀԻ միջոցները գոյանում են՝

- **Հայաստանի հարկատուների կողմից կատարվող դրոշմանիշային պարտադիր ամսական վճարներից՝ 1,000 կամ 15,000 ՀՀ դրամ** (կախված եկամտի չափից)
- **Հայաստանից և աշխարհից ստացվող նվիրատվություններից**
- **ԶԻՆԱՊԱՀԻ ակտիվների կառավարման արդյունքում ստացված եկամուտներից**

ԶԻՆԱՊԱՀԻ կառավարման բարձրագույն մարմինը Հոգաբարձուների խորհուրդն է, որը կազմված է բարձր հեղինակություն վայելող փորձառու մասնագետներից՝ ֆինանսների և բանկային գործի, բիզնեսի, ճգնաժամային կառավարման, դրամահավաքի և ակտիվների կառավարման ոլորտներում: ԶԻՆԱՊԱՀԻ գործառնական կառավարումը իրականացվում է բարձր մոտիվացիայով և փորձառու գործառնական թիմի կողմից:

ԶԻՆԱՊԱՀԻ կայքը արտացոլում է բոլոր ֆինանսական հոսքերը՝ նվիրատվությունները և պարտադիր վճարները, ինչպես նաև հրապարակում է շահառուների ցանկը և կատարված հատուցումները: ԶԻՆԱՊԱՀԻ կայքում հրապարակվում են նաև **գլխավոր գործադիր տնօրենի եռամսյակային, տարեկան հաշվետվությունները** և աշխարհի լավագույն 10 աուդիտորական ընկերություններից մեկի կողմից իրականացված **Տարեկան աուդիտի հաշվետվությունը**:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Համախմբել ազգին՝ կանգնելու զինծառայողների և նրանց ընտանիքների կողքին՝ ապահովելու նրանց ֆինանսական կայունությունը և արժանապատիվ կյանքը:

ՏԵՍԼԱԿԱՆԸ

Լինել սոցիալապես պատասխանատու հիմնադրամ զինծառայողների համար, որն իր մեջ ներառում է պարտադիր և կամավոր ապահովագրական հատուցումները:

ԱՐԺԵՔՆԵՐԸ

ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ, ՀԱԾՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆ

Այսօր մեր պարտքն է կանգնել զոհված, անհայտ բացակայող և հաշմանդամ դարձած մեր զինծառայողների և նրանց ընտանիքների կողքին:

ԶԻՆԱՊԱՀԻ զարգացման ուղին դեպի ֆինանսական անկախություն

2017 թվականին հիմնադրման պահին ԶԻՆԱՊԱՀԻ կառավարումն իրականացվում էր կամավորական հիմունքներով Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից՝ ապահովելով հիմնադրամի գործունեության սկզբնական փուլում բարձր ինստիտուցիոնալ վերահսկողություն և կայունություն: 2021 թվականից սկսած ԶԻՆԱՊԱՀԸ մեկնարկել կառավարման մոդելի փուլային անցումը Կենտրոնական բանկի համակարգից դեպի լիարժեք անկախ իրավաբանական անձ՝ ձևավորելով սեփական գործառնական, ֆինանսական և տեխնոլոգիական ենթակառուցվածքները: Այս անցումը կարևոր փուլ էր հիմնադրամի ինստիտուցիոնալ ինքնավարության, կառավարման կարողությունների և երկարաժամկետ կայունության ամրապնդման ճանապարհին:

Թիմ և կառավարման կառուցվածք

ԶԻՆԱՊԱՀԻ կառավարումն իրականացվում է անկախ կառավարման մարմնի՝ **յոթ անդամից բաղկացած Հոգաբարձուների խորհրդի** կողմից, որն ապահովում է ռազմավարական ուղղորդում և ինստիտուցիոնալ վերահսկողություն: Հիմնադրամի առօրյա գործունեությունն իրականացվում է **14 աշխատակիցներից բաղկացած գործադիր թիմի** կողմից:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են կազմակերպական վերակազմավորման գործընթացները՝ նպատակ ունենալով ամրապնդել ԶԻՆԱՊԱՀԻ հիմնական կարողությունները որպես ֆինանսական կառույց՝ միաժամանակ ընդլայնելով նրա դերը սոցիալական ծրագրերի իրականացման ոլորտում՝ ՀՀ կառավարության հետ սերտ համագործակցությամբ: Միաժամանակ ներդրվել է աշխատակիցների զարգացման և գնահատման համակարգ՝ կիրառելով Teamflect թվային հարթակը, որը հնարավորություն է տալիս կառուցվածքային ձևով իրականացնել նպատակների սահմանում, կատարողականի մշտադիտարկում և թիմի մասնագիտական զարգացում:

Գործառնական գործընթացներ և ծառայությունների արտապատվիրակում

2025թ. ԶԻՆԱՊԱՀԸ վերսկսել է իր հանրային իրազեկման և հաղորդակցության արշավը՝ նպատակ ունենալով բարձրացնել թափանցիկությունը, հանրային ներգրավվածությունը և շահառուների իրազեկվածությունը:

2025թ. ֆինանսական աուդիտն ավարտվել և հրապարակվել է ԶԻՆԱՊԱՀԻ կայքում՝ համապատասխան մեր հաշվետվողականության և արդյունավետ կառավարման հանձնառությանը:

Գործառնական արդյունավետությունն ու ծախսարդյունավետությունն ապահովելու նպատակով ԶԻՆԱՊԱՀԸ շարունակել է կիրառել արտապատվիրակման ծառայություններ հետևյալ հիմնական ուղղություններով՝

- **Մարդկային ռեսուրսների կառավարում**
- **Հաշվապահական ծառայություններ**
- **Զանգերի կենտրոնի գործունեություն**
- **Տեղեկատվական անվտանգության ծառայություններ**
- **Իրավաբանական խորհրդատվական ծառայություններ**

Այս մոտեցումը հիմնադրամին հնարավորություն է տալիս պահպանել համեմատաբար ճկուն ներքին կառուցվածք՝ միաժամանակ ապահովելով բարձրորակ ծառայությունների մատուցում:

Միգրացիա և ենթակառուցվածքների զարգացում

ԶԻՆԱՊԱՀԸ շարունակել է իր անցումը դեպի լիարժեք գործառնական անկախություն: Ավարտվել է zinapah.am կայքի գործարկումը, և ներկայում շարունակվում են տեխնիկական խնդիրների կարգավորման ու օգտատերերի փորձի բարելավման աշխատանքները: Միաժամանակ մեկնարկել են հատուցումների համակարգի ֆինանսական ենթակառուցվածքների մշակման աշխատանքները, որոնց տեխնիկական առաջադրանքը ներկայում մշակման փուլում է: Նախաձեռնությունը կարևոր քայլ է հատուցումների գործընթացների հետագա ավտոմատացման, ճշգրտության և մասշտաբայնության ապահովման ուղղությամբ:

Օրենսդրական փոփոխություններ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համագործակցության շրջանակում ԶԻՆԱՊԱՀԸ շարունակել է աշխատանքները օրենսդրական նախաձեռնության շուրջ, որի նպատակն է ամրապնդել հաշմանդամություն ունեցող զինծառայողների աջակցության մեխանիզմները: Ներկայում մշակման փուլում են համապատասխան օրենսդրական փոփոխություններ, որոնք միտված են գործառնական գործընթացների կատարելագործմանը և ակնկալվում է, որ կնպաստեն շահառուների երկարաժամկետ պաշտպանության և սոցիալական ներառման բարձրացմանը:

Գլխավոր գործադիր տնօրենի ուղերձը

Կարինե Սարգսյան
Գլխավոր գործադիր տնօրեն

Հարգելի՛ ԶԻՆԱՊԱՀԻ համայնք,

Ամփոփելով **2026թ. երկրորդ եռամսյակը՝** ուրախ եմ ներկայացնել ԶԻՆԱՊԱՀ զինծառայողների ապահովագրության ազգային հիմնադրամի գործունեության արդյունքները: Տարվա առաջին կիսամյակը ևս մեկ անգամ ցույց տվեց, որ Հիմնադրամը շարունակում է վստահորեն իրականացնել իր առաքելությունը՝ պահպանելով կայունությունը, թափանցիկությունը և պատասխանատվությունը՝ միաժամանակ հարմարվելով փոփոխվող ֆինանսական միջավայրին:

2017թ. հիմնադրվելուց ի վեր ԶԻՆԱՊԱՀԸ դարձել է համազգային նշանակության եզակի կառույց՝ հիմնված թափանցիկության, հաշվետվողականության և բարեվարքության սկզբունքների վրա: 2017թ. մինչև 2026թ. երկրորդ եռամսյակի դրությամբ Հիմնադրամը հատուցում է տրամադրել **5,512 շահառուի՝** ապահովելով զոհված և անհայտ բացակայող զինծառայողների ընտանիքների, ինչպես նաև խորը և ծանր ֆունկցիոնալ սահմանափակումներ ունեցող կամ I և II խմբի զինհաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների երկարաժամկետ ֆինանսական աջակցությունը: Երկրորդ եռամսյակի ընթացքում Հիմնադրամի մեկ նոր շահառու է ավելացել, և մենք, ինչպես միշտ, պատրաստ ենք կանգնել հայրենիքի պաշտպանության համար ամենաթանկը՝ իրենց կյանքն ու առողջությունը զոհաբերած զինծառայողների և նրանց ընտանիքների կողքին:

Երկրորդ եռամսյակում Հիմնադրամի ընդհանուր եկամուտը կազմել է **12.9 մլրդ դրամ**, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է **14%-ով՝** հիմնականում պայմանավորված պարտադիր դրոշմանիշային վճարներից ստացվող մուտքերի նվազմամբ: Այնուամենայնիվ, ցանկանում եմ ևս մեկ անգամ վստահեցնել մեր շահառուներին, որ հատուցումների վճարումները շարունակվում են և կշարունակվեն իրականացվել **ամբողջ ծավալով, սահմանված ժամկետներում և օրենքով նախատեսված կարգով՝** առանց որևէ ընդհատման:

Եռամսյակի ամենակարևոր դրական զարգացումներից մեկը ակտիվների կառավարման եկամուտների շարունակական աճն էր: Դրանք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են **30%-ով՝** հասնելով **3.9 մլրդ դրամի** և կազմելով ընդհանուր եկամուտների շուրջ **30%-ը**, մինչդեռ 2025թ. նույն ժամանակահատվածում դրանց մասնաբաժինը կազմում էր **20%**: Սա վկայում է Հիմնադրամի երկարաժամկետ ներդրումային ռազմավարության արդյունավետության և ներդրումային եկամուտների աճող նշանակության մասին՝ ֆինանսական կայունության ապահովման գործում: Միաժամանակ, նվիրատվությունների ոլորտում արձանագրվել են կայունացման դրական միտումներ. ընդհանուր նվիրատվություններն աճել են **5%-ով**, իսկ նվիրատվությունների քանակը՝ **7%-ով**, ինչը վկայում է մեր նվիրատուների շարունակական վստահության և աջակցության մասին:

Ֆինանսական կարգապահությունը շարունակում է մնալ Հիմնադրամի գործունեության հիմնասյուներից մեկը: Ընդհանուր ծախսերը կազմել են **4.9 մլրդ դրամ՝** նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով ընդամենը **1%**-ով: Ծախսերի **92%-ը** բաժին է ընկնում հատուցումների վճարմանը, ինչը ևս մեկ անգամ ընդգծում է մեր առաջնահերթությունը՝ լիարժեք և հետևողականորեն կատարել Հիմնադրամի օրենքով սահմանված հիմնական պարտավորությունները՝ միաժամանակ պահպանելով վարչական և գործառնական ծախսերի արդյունավետ կառավարումը:

Ուրախությամբ հայտնում եմ նաև, որ **ԶԻՆԱՊԱՀԻ 2025թ. ֆինանսական հաշվետվություններն** հաջողությամբ անցել են անկախ աուդիտ՝ ԲԵՅՔԵՐ ԹԻԼԼԻ ԱՐՄԵՆԻԱ ՓԲԸ-ի կողմից՝ համաձայն **Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (IFRS)**: Անկախ աուդիտը հաստատել է մեր հանձնառությունը թափանցիկության, պատշաճ կառավարման և ֆինանսական հաշվետվողականության նկատմամբ: Աուդիտի ամբողջական հաշվետվությունը հասանելի է ԶԻՆԱՊԱՀԻ պաշտոնական կայքում:

Երկրորդ եռամսյակը նշանավորվեց նաև ֆինանսական աջակցությունից դուրս կարևոր նախաձեռնություններով: **ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության** հետ համագործակցությամբ ԶԻՆԱՊԱՀԸ մեկնարկեց հաշմանդամություն ունեցող շահառուներին աջակցող միջոցների տրամադրման և վերանորոգման ֆինանսավորման նոր ծրագիր: Հաշվետու ժամանակահատվածում **32 շահառու** ստացել է **42 օժանդակ սարք**, ևս **3 շահառու՝ օժանդակ սարքերի վերանորոգման 4 ծառայություն,** որոնց ընդհանուր արժեքը կազմել է ավելի քան **38.6 մլն դրամ**: Միաժամանակ, Հիմնադրամը շարունակել է զարգացնել շահառուների աջակցության իր համակարգը՝ կազմակերպելով շահառուների հանդիպումներ, երեխաների և ընտանիքների համար նախատեսված ծրագրեր, ինչպես նաև վերականգնողական և տնտեսական հզորացման նախաձեռնություններ:

Շարունակելով մեր ճանապարհը՝ ԶԻՆԱՊԱՀԸ հավատարիմ է մնում այն հիմնարար արժեքներին, որոնք առաջնորդել են մեզ հիմնադրման օրվանից՝ **թափանցիկություն, հաշվետվողականություն և բարեվարքություն**: Մենք շարունակելու ենք ամրապնդել Հիմնադրամի ինստիտուցիոնալ կարողությունները՝ ապահովելով, որ մեզ վստահված յուրաքանչյուր դրամ կառավարվի պատասխանատվությամբ և ծառայի իր նպատակին:

Սրտանց շնորհակալություն եմ հայտնում Հայաստանի աշխատող քաղաքացիներին, որոնց պարտադիր վճարումները շարունակում են մնալ համազգային այս յուրահատուկ համերաշխության համակարգի հիմքը, մեր նվիրատուներին, գործընկերներին և աջակիցներին՝ շարունակական վստահության համար, ինչպես նաև Հոգաբարձուների խորհրդի անդամներին և ԶԻՆԱՊԱՀԻ գործադիր թիմին՝ իրենց արհեստավարժ կառավարման, նվիրումի և առաքելությանը հավատարիմ ծառայության համար:

Միասին մենք ոչ միայն մեր խորին երախտագիտությունն ու հարգանքն ենք արտահայտում հայրենիքի պաշտպանության համար ամենաթանկը՝ իրենց կյանքն ու առողջությունը զոհաբերած զինծառայողներին և նրանց ընտանիքներին, այլև համատեղ կառուցում ենք ավելի ամուր, կայուն և արժանապատիվ ապագա Հայաստանի Հանրապետության համար:

Հարգանքով՝
Կարինե Սարգսյան
Գլխավոր գործադիր տնօրեն
ԶԻՆԱՊԱՀ

ԶԻՆԱՊԱՀԻ գործառնությունները 2017-2026թթ. ԵՌ 2-ը Սահող գնահատականով (ՍԳ)

2026թ. ԵՌ 2 ՍԳ-ն արտացոլում է ԶԻՆԱՊԱՀԻ շարունակական անցումը դեպի առավել բազմազան և կայուն ֆինանսավորման մոդել: Թեև ընդհանուր եկամուտների նվազում է կանխատեսվում՝ պայմանավորված օրենսդրական փոփոխությունների հետևանքով պարտադիր դրոշմանիշային վճարներից գոյացող մուտքերի 43% նվազմամբ, ակտիվների կառավարման եկամուտների աճը և հատուցումների վճարման առաջնահերթության պահպանումը կշարունակեն ապահովել Հիմնադրամի երկարաժամկետ ֆինանսական կայունությունն ու իր հիմնական պարտավորությունների կատարումը:

2026թ. ԵՌ 2 ՍԳ-ով ընդհանուր եկամուտները կանխատեսվում են 30% նվազմամբ՝ հիմնականում պայմանավորված պարտադիր վճարներից գոյացող մուտքերի 43% կրճատմամբ: Միաժամանակ կանխատեսվում է նվիրատվությունների նվազում՝ կանոնավոր նվիրատվությունները՝ 22%-ով, իսկ Կամուրջ ծրագրի նվիրատվությունները՝ 5%-ով:

Ակտիվների կառավարման եկամուտները կանխատեսվում են 22% աճով՝ հասնելով մոտ 15.3 մլրդ ՀՀ դրամի, իսկ դրանց մասնաբաժինը ընդհանուր եկամուտներում՝ շուրջ 35%՝ 2025թ. 20%-ի փոխարեն: Միևնույն ժամանակ պարտադիր վճարների մասնաբաժինը կանխատեսվում է, որ կնվազի 79%-ից մինչև 64%՝ արտացոլելով Հիմնադրամի անցումը դեպի առավել բազմազան ֆինանսավորման կառուցվածք:

Ընդհանուր ծախսերը կանխատեսվում են 8% աճով: Հատուցումների վճարումները, որոնք կազմում են ընդհանուր ծախսերի շուրջ 92%-ը, կաճեն 1%-ով: Վարչական ծախսերը կավելանան 12%-ով՝ պահպանելով ընդհանուր ծախսերի շուրջ 2% մասնաբաժինը, իսկ գործառնական ծախսերը կհասնեն 1.3 մլրդ ՀՀ դրամի՝ կազմելով ընդհանուր ծախսերի շուրջ 6%-ը՝ որը իր մեջ ընդգրկում է նաև սոցիալական ծրագրերի մեծ մասնաբաժինը:

մլն, ՀՀ դրամ	2017-2020***	2021	2022	2023	2024	2025	2026 ՍԳ	2017-2026 ՍԳ	2026թ. 2025-ի համեմատ	% հարաբ 2025	% հարաբ 2026
Եկամուտ պարտադիր վճարներից	30,914	29,072	35,274	43,199	45,393	49,171	27,881	260,905	-43%	79%	64%
Նվիրատվություններ	7,280	1,290	508	273	171	106	83	9,721	-22%	0.17%	0.19%
Կամուրջ նվիրատվություն*	1,000	1,510	239	237	86	77	73	3,221	-5%	0.12%	0.17%
ՀՀԿԲ**	-	301	-	-	-	-	-	301	NA	0%	0%
Ակտիվների կառավարում	4,970	1,841	3,256	5,944	9,339	12,570	15,280	53,201	22%	20%	35%
Այլ եկամուտներ տուգանքներից	-	0.24	0.19	0.26	0.29	0.58	0.35	2	-41%	0.0009%	0.0008%
ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏ	**44,164**	**34,015**	**39,278**	**49,654**	**54,990**	**61,925**	**43,317**	**327,342**	**-30%**	**100%**	**100%**
Հատուցումներ	9,664	44,484	16,878	14,747	21,489	19,181	19,409	145,852	1%	98%	92%
Վարչական ծախսեր	-	-	246	267	316	332	370	1,531	12%	2%	2%
Գործառնական ծախսեր	0	149	21	25	34	44	1,331	1,605	2915%	0.23%	6%
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**9,665**	**44,633**	**17,146**	**15,039**	**21,838**	**19,557**	**21,110**	**148,988**	**8%**	**100%**	**100%**

***Կամուրջ –** ՀՀ կառավարության կողմից ֆինանսավորվող ծրագիր՝ նախքան ԶԻՆԱՊԱՀԻ շահառու դառնալը ծանր վիրավորված կամ անհետ կորած զինծառայողներին հատուցում տալու համար: 2020 թվականի դեկտեմբերից սկսած այս ծրագրով ամսական 300,000 ՀՀ դրամի չափով հատուցումներ են իրականացվում իրավասու շահառուներին:

**** ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀԿԲ) ներդրում –** 2021թ. ընթացքում կատարված բոլոր ծախսերը ֆինանսավորել է ՀՀ Կենտրոնական բանկը: Ֆինանսավորումը կարգավորվում է օրենքով և նախկինում հաստատվել է ԿԲ Խորհրդի կողմից:

***** Ներառում է 2008-2016թթ.** դեպքերի մասով հատուցումները:

ԶԻՆԱՊԱՀԻ գործառնությունները 2017-2026թթ. ԵՌ 2 (ՍԳ)

2017թ.–2026թ. ԵՌ 2-ի ՍԳ տվյալները վկայում են ԶԻՆԱՊԱՀԻ ֆինանսական մոդելի շարունակական ամրապնդման և ֆինանսավորման կառուցվածքի աստիճանական դիվերսիֆիկացման մասին: 2020–2021թթ. աննախադեպ աճից հետո Հիմնադրամը պահպանել է ֆինանսական կայունությունը՝ չնայած օրենսդրական փոփոխությունների հետևանքով պարտադիր դրոշմանիշային վճարներից գոյացող մուտքերի կանխատեսվող նվազմանը:

2022թ.-ից ի վեր ընդհանուր եկամուտները շարունակաբար գերազանցում են ընդհանուր ծախսերը: Եթե 2025թ. ընդհանուր եկամուտները կազմել են **61.9 մլրդ ՀՀ դրամ**, իսկ ընդհանուր ծախսերը՝ **19.6 մլրդ ՀՀ դրամ**, ապա **2026թ. ԵՌ 2-ի ՍԳ-ով** դրանք կանխատեսվում են համապատասխանաբար **43.3 մլրդ ՀՀ դրամ և 21.1 մլրդ ՀՀ դրամ**: Եկամուտների և ծախսերի միջև տարբերության կրճատումը հիմնականում պայմանավորված է պարտադիր դրոշմանիշային վճարներից գոյացող մուտքերի նվազմամբ, մինչդեռ ակտիվների կառավարման եկամուտների աճող մասնաբաժինը շարունակում է ամրապնդել Հիմնադրամի երկարաժամկետ ֆինանսական կայունությունն ու օրենքով սահմանված պարտավորությունների կատարման կարողությունը:

ԶԻՆԱՊԱՀԻ 2017-2026թթ. ԵՌ 2 ՍԳ եկամուտը ծախսերի համեմատ, մլն ՀՀ դրամ



ԶԻՆԱՊԱՀԻ 2025-2026թթ. ԵՌ 2-ի ֆինանսական կատարողականի համեմատություն

2026թ. ԵՌ 2-ում ԶԻՆԱՊԱՀԻ ֆինանսական արդյունքներն արտացոլում են եկամուտների բնականոնացումը՝ ընդհանուր ծախսերի կայուն մակարդակի պայմաններում: Ընդհանուր եկամուտները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 14%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է պարտադիր դրոշմանիշային վճարներից գոյացող մուտքերի 26% նվազմամբ: Միաժամանակ կանոնավոր նվիրատվություններն աճել են 5%-ով, իսկ «Կամուրջ» ծրագրի նվիրատվությունները՝ 36%-ով:

Ակտիվների կառավարման եկամուտներն աճել են 30%-ով, իսկ դրանց մասնաբաժինը ընդհանուր եկամուտներում՝ 20%-ից հասել է 30%-ի: Միևնույն ժամանակ պարտադիր վճարների մասնաբաժինը նվազել է 80%-ից մինչև 69%՝ արտացոլելով Հիմնադրամի ֆինանսավորման կառուցվածքի շարունակական դիվերսիֆիկացումը:

Ընդհանուր ծախսերն աճել են ընդամենը 1%-ով: Հատուցումների վճարումները, որոնք կազմում են ընդհանուր ծախսերի 98%-ը, մնացել են գրեթե անփոփոխ, իսկ վարչական ծախսերն աճել են 8%-ով:

Ընդհանուր առմամբ, 2026թ. ԵՌ 2-ի արդյունքները վկայում են, որ չնայած պարտադիր վճարներից գոյացող մուտքերի նվազմանը, ակտիվների կառավարման եկամուտների աճը և պատասխանատու ֆինանսական կառավարումը շարունակում են ամրապնդել ԶԻՆԱՊԱՀԻ երկարաժամկետ ֆինանսական կայունությունն ու իր պարտավորությունների կատարման կարողությունը:

ՄԼՆ, ԴՐԱՄ	2025 ԵՌ2	2026 ԵՌ2	ԵՌ2'26 ԵՌ2'25-ի համեմատ	% հարաբ ԵՌ2 2025	% հարաբ ԵՌ2 2026
Եկամուտ պարտադիր վճարներից	12,081	8,982	-26%	80%	69%
Նվիրատվություններ	39	41	5%	0.3%	0.3%
Կամուրջ նվիրատվություն*	13	18	36%	0.1%	0.1%
ՀՀԿԲ**	-	-	NA	0%	0%
Ակտիվների կառավարում	2,986	3,891	30%	20%	30%
Այլ եկամուտներ տուգանքներից	0.25	0.26	4%	0.002%	0.002%
ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏ	**15,120**	**12,932**	**-14%**	**100%**	**100%**
Հատուցումներ	4,764	4,767	0%	98%	97%
Կապ. ծախսեր	84	91	8%	2%	2%
Գործառնական ծախսեր	16	66	310%	0.33%	1.33%
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**4,864**	**4,924**	**1%**	**100%**	**100%**

*Կամուրջ – ՀՀ կառավարության կողմից ֆինանսավորվող ծրագիր՝ նախքան ԶԻՆԱՊԱՀԻ շահառու դառնալը ծանր վիրավորված կամ անհետ կորած զինծառայողներին հատուցում տալու համար: 2020 թվականի դեկտեմբերից սկսած այս ծրագրով ամսական 300,000 ՀՀ դրամի չափով հատուցումներ են իրականացվում իրավասու շահառուներին:

** ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀԿԲ) ներդրում – 2021թ. ընթացքում կատարված բոլոր ծախսերը ֆինանսավորել է ՀՀ Կենտրոնական բանկը: Ֆինանսավորումը կարգավորվում է օրենքով և նախկինում հաստատվել է ԿԲ Խորհրդի կողմից:

*** Ներառում է 2008-2016թթ դեպքերի մասով հատուցումները:

ԶԻՆԱՊԱՀԻ նվիրատվությունները՝ 2017-2026թթ. երկրորդ եռամսյակների կտրվածքով

2017–2026թթ. ԵՌ 2-ի դրությամբ (առանց «Կամուրջ» ծրագրի) ԶԻՆԱՊԱՀԸ ստացել է շուրջ **9.7 մլրդ դրամ** նվիրատվություն:

Նվիրատվությունների ընդհանուր թիվը կանխատեսվում է, որ կգերազանցի **97,000-ը**, իսկ մեկ նվիրատվության միջին չափը կկազմի շուրջ **100,000 դրամ**: 2026թ. ՍԳ-ով ընդհանուր նվիրատվությունները կանխատեսվում են **83 մլն դրամ**, իսկ 2025թ. կազմել են **106 մլն դրամ**:

2026թ. ԵՌ 2-ում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ընդհանուր նվիրատվություններն աճել են **5%-ով՝** կազմելով **40.7 մլն դրամ**: Նվիրատվությունների քանակն աճել է **7%-ով** (629-ից՝ 674), մինչդեռ մեկ նվիրատվության միջին չափը փոքր-ինչ նվազել է՝ **2%-ով** (62 հազար դրամից՝ 60 հազար դրամ):

Նվիրատվությունների գերակշիռ մասը կատարվում է հայկական դրամով՝ ինչպես բանկային փոխանցումների, այնպես էլ www.zinapah.am կայքի միջոցով:

2017-2026թթ. նվիրատվությունները արժույթի, ԵՌ 2 ՍԳ

Արժույթ՝ 000	2017-2020	2021	2022	2023	2024	2025	2026 RE	2017-2026 ՍԳ ԵՌ2	2026 ԵՌ2 ՍԳ vs 2025
ՀՀ դրամ	4,676,538	739,093	301,333	173,750	87,650	68,982	54,676	6,101,936	-21%
Դոլար	4,833	879	492	233	191	89	73	6,790	-19%
Ռուբլի	115,069	6,517	455	1	2	NA	NA	NA	NA
Եվրո	798	122	34	20	31	6	3	1,015	-52%
2017-2026թթ. նվիրատվությունները ՀՀ դրամով, ԵՌ 2 ՍԳ									
ՀՀ դրամ	7,280,467	1,290,065	508,062	273,307	171,279	106,146	82,990	9,712,315	-22%
Նվիրատվությունների քանակ	44,576	25,976	12,665	5,209	4,167	2,401	2,406	97,400	0%
Նվիրատվությունների միջին չափ	163	50	40	52	41	44	34	100	-22%

Նվիրատվությունները ըստ արժույթի, ԵՌ 2

Արժույթ՝ 000	2025 ԵՌ2	2026 ԵՌ2	2025 ԵՌ2 vs 2024 ԵՌ2
ՀՀ դրամ	15,394	19,539	-27%
Դոլար	58	56	-4%
Ռուբլի	NA	NA	NA
Եվրո	1	1	-48%
Նվիրատվությունները ՀՀ դրամով, ԵՌ 2			
ՀՀ դրամ	38,730	40,682	5%
Նվիրատվությունների քանակ	629	674	7%
Նվիրատվությունների միջին չափ	62	60	-2%

2026թ. մասնաբաժինը 2017-2026թթ. ընդհանուր ցուցանիշում, ՍԳ, ԵՌ 2

2017 թվականից մինչև 2026թ. ԵՌ 2-ի ՍԳ-ի համաձայն՝

- Պարտադիր վճարները կկազմեն ընդհանուր եկամուտների շուրջ **11%-ը:**
- Նվիրատվությունները կպահպանեն իրենց սահմանափակ դերը՝ կազմելով ընդհանուր եկամուտների մոտ **1%-ը:**
- Ակտիվների կառավարման եկամուտները կկազմեն ընդհանուր կուտակային եկամուտների շուրջ **29%-ը:**
- Ընդհանուր հատուցումները կկազմեն նույն ժամանակահատվածում գոյացած ընդհանուր եկամուտների շուրջ **13%-ը:**

ՄԼՆ ՀՀ դրամ	2025	2026	2017-2026 ՍԳ	% հարաբ 2026թ. ՍԳ
Պարտադիր վճարներ	49,171	27,881	260,905	11%
Նվիրատվություններ	106	83	9,712	1%
Ակտիվների կառավարում	12,570	15,280	53,201	29%
Հատուցումներ	19,181	19,409	145,852	13%

ԶԻՆԱՊԱՀԻ շահառուները և վճարված հատուցումները 2026թ. ԵՌ 2

- 2017–2026թթ. ԵՌ 2-ի ընթացքում ԶԻՆԱՊԱՀԸ հատուցում է տրամադրել **5,512** շահառուի:
- 2026 թ. ԵՌ 2-ում հատուցում է տրամադրվել ընդամենը **1 նոր դեպքով**, մինչդեռ 2025 թ. ԵՌ 2-ում հատուցվել էր **6 նոր դեպք**:
- 2026 թ. ԵՌ 2-ի ընդհանուր պատկերը ներկայացվում է ստորև.

2026թ. ԵՌ 2 – 1 դեպք

ԶՈՀՎԱԾ	ԱՆՀԱՅՏ ԲԱՑԱԿԱՅՈՂ	ԽՈՒՄԲ 1	ԽՈՒՄԲ 2
1	0	0	0

2025թ. ԵՌ 2 – 6 դեպք

ԶՈՀՎԱԾ	ԱՆՀԱՅՏ ԲԱՑԱԿԱՅՈՂ	ԽՈՒՄԲ 1	ԽՈՒՄԲ 2
2	1	0	3

2017-2026թթ. ԵՌ 2-ի հատուցումները՝ ԸՍՏ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ, 5,512 դեպքով



2017-2026թ. ԵՌ 2 – 5,512* դեպքեր

ԶՈՀՎԱԾ	ԱՆՀԱՅՏ ԲԱՑԱԿԱՅՈՂ	ԽՈՒՄԲ 1	ԽՈՒՄԲ 2
4,581	240	158	533

*Զինծառայողների վերաբերյալ ներկայացված բոլոր թվային տվյալները արտացոլում են տվյալ հաշվետու ժամանակահատվածի դրությամբ արձանագրված կարգավիճակները:

ԶԻՆԱՊԱՀԻ շահառուներին վճարված հատուցումները 2017-2026թթ. ԵՌ 2-ում

2017–2026թթ. ԵՌ 2-ի դրությամբ գրանցված **5,512 շահառուների** կառուցվածքն ըստ զինծառայության կարգավիճակի ներկայացված է ստորև: Շահառուների ամենամեծ խումբը կազմում են ժամկետային զինծառայողները **(43%)**, որոնց հաջորդում են պայմանագրային շարքայինները **(19%)**, մոբիլիզացիոն շարքայինները **(17%)** և պայմանագրային սպաները **(11%)**: Կամավորները կազմում են շահառուների **8%-ը**, մոբիլիզացիոն սպաները՝ **2%-ը,** իսկ պարտադիր ծառայության սպաները՝ ընդամենը **0.3%-ը**:

2017-2025թթ. ԵՌ 2-Ի ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԸ՝ ԸՍՏ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԵՎ ԿՈՉՄԱՆ, 5,512 ԴԵՊՔՈՎ





2017-2026ԹԹ. ԵՌ 2-Ի ԿՏՐՎԱԾՔՈՎ ԱՄՓՈՓ ՊԱՏԿԵՐԸ

1

ՆՈՐ հատուցման դեպք 2025թ. ԵՌ 2-ում և 5,512 դեպքեր 2017-2026թթ. ԵՌ 2-ում

4.8 մլրդ ՀՀ դրամի

հատուցումներ 2026թ. ԵՌ 2-ում

136 մլրդ ՀՀ դրամի

հատուցում 2017-2026թթ. ԵՌ 2-ի դրությամբ՝
զոհվածներին, անհայտ բացակայողներին և հաշմանդամության իրավունքով շահառուներին

43%

պարտադիր վճարների նվազում 2026թ. ԵՌ 2-ում՝ 2025թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ

Գործընկերային կապերի հաստատում և ընդլայնում

ԶԻՆԱՊԱՀԸ շարունակում է ամրապնդել իր գործընկերային կապերը հիմնադրամների, հասարակական կազմակերպությունների և բարեգործական հաստատությունների հետ՝ նպատակ ունենալով աջակցել զինծառայողներին և նրանց ընտանիքներին: Այս գործընկերությունները միտված են շահառուների սոցիալական, ֆիզիկական և հոգեբանական բարեկեցության ապահովմանը՝ համակարգային և շարունակական նախաձեռնությունների միջոցով:

Շահառուների անձնական զարգացմանն ու երկարաժամկետ բարեկեցությանը նպաստելու նպատակով ԶԻՆԱՊԱՀԸ իր գործընկեր կազմակերպությունների հետ նախաձեռնել է սոցիալական ինտեգրման և զարգացման մի շարք ծրագրեր, որոնց համար մշակվել է ամբողջական պլան՝ 2026թ. առաջնահերթություններով:

ԶԻՆԱՊԱՀԸ բազմաթիվ խորհրդակցական հանդիպումներ է կազմակերպել պետական մարմինների, ՀԿ-ների և գործընկեր հիմնադրամների հետ՝ միավորելու ջանքերը հետևյալ ուղղություններով՝

- **Կրթություն և հմտությունների զարգացում**
- **Տնտեսական ինտեգրում և զբաղվածություն**
- **Ձեռնարկատիրություն և բիզնեսի խթանում**
- **Համայնքային ընդգրկում և կայունության ձևավորում**

Հավատարիմ իր առաքելությանը՝ ԶԻՆԱՊԱՀԻ աջակցությամբ և միջնորդությամբ մի շարք համատեղ նախաձեռնություններ են իրականացվել տարբեր կազմակերպությունների հետ գործընկերությամբ: Այս նախաձեռնությունները նպատակ ունեն տրամադրել թիրախավորված աջակցություն և համապատասխան տեղեկատվություն, ինչպես նաև խթանել շահառուների սոցիալական ինտեգրումը Հայաստանի ողջ տարածքում:

Համագործակցություն Երևանի մանկապատանեկան ստեղծագործության քաղաքային կենտրոնի հետ

Երևանի մանկապատանեկան ստեղծագործության քաղաքային կենտրոնի նախաձեռնությամբ և **ԶԻՆԱՊԱՀԻ** հետ համագործակցությամբ ԶԻՆԱՊԱՀԻ շահառու երեխաների համար Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում կազմակերպվել է «Թանգարանի գաղտնիքը» մյուզիքլի անվճար դիտում:

Ծրագրի շրջանակում տրամադրվել է **100 անվճար տոմս՝** մայրիկ + երեխա ձևաչափով:

Միջոցառումը մասնակիցների համար դարձել է ոչ միայն մշակութային այցելություն, այլև դրական հույզերով, նոր բացահայտումներով ու ջերմ հիշողություններով լի տոնական օր:

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Միկրոպրոցեսորային ծնկահոդերի ցուցադրություն ՕՐԹԵԶ կենտրոնում

ՕՐԹԵԶ օրթեզավորման և պրոթեզավորման կենտրոնի նախաձեռնությամբ և **ԶԻՆԱՊԱՀԻ** հետ համագործակցությամբ մայիսի 12-ին **ՕՐԹԵԶ** կենտրոնում կազմակերպվել է ֆրանսիական **PROTEOR** ընկերության միկրոպրոցեսորային ծնկահոդերի **(QUATTRO** և **SYNSYS)** ցուցադրություն, որի ընթացքում մասնակիցները հնարավորություն են ունեցել ծանոթանալու նորագույն տեխնոլոգիաներին և փորձարկելու ներկայացված հոդերը:

Միջոցառման վերաբերյալ նախապես ծանուցվել են ԶԻՆԱՊԱՀԻ՝ զինհաշմանդամություն ունեցող շահառուները:

Համագործակցություն Access to Care հայ-ամերիկյան բարեգործական ատամնաբուժական կլինիկայի հետ

ԶԻՆԱՊԱՀԻ շահառուներին անվճար և արտոնյալ պայմաններով ատամնաբուժական ծառայությունների հասանելիությունն ապահովելու նպատակով՝ շարունակվել է համագործակցությունը Access to Care հայ-ամերիկյան բարեգործական ատամնաբուժական կլինիկայի հետ:

Տարվա ընթացքում շահառուները տարբեր հանդիպումների և հաղորդակցման միջոցով տեղեկացվել են ծրագրի ընձեռած հնարավորությունների մասին: Տեղեկատվությունը հրապարակվել է նաև ԶԻՆԱՊԱՀԻ պաշտոնական կայքում ու սոցիալական ցանցերում, ինչպես նաև շահառուներին ուղարկվել են տեղեկատվական SMS-հաղորդագրություններ:

Համագործակցության շրջանակում աշխատանքներ են տարվել ծառայությունների հասանելիության ընդլայնման և շահառուների ավելի լայն շրջանակ ընդգրկելու ուղղությամբ:

Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված միջոցառում Երևան Պարկում

Երեխաների պաշտպանության միջազգային օրվան ընդառաջ՝ **Երևան Պարկի** հետ համագործակցությամբ արդեն հինգերորդ տարին անընդմեջ կազմակերպվել է տոնական միջոցառում ԶԻՆԱՊԱՀԻ երեխա շահառուների համար: Նախաձեռնությանը մասնակցել են զոհված և անհայտ բացակայող ճանաչված զինծառայողների 5–12 տարեկան երեխաներն ու նրանց մայրերը՝ Երևանից և ՀՀ տարբեր մարզերից: Մասնակիցների ընդհանուր թիվը կազմել է **648 մարդ**:

Երևան Պարկի կողմից տրամադրվել է **300 անվճար մուտքի տոմս և 200 սննդի փաթեթ**, իսկ մյուս մասնակիցների մուտքն ու սնունդն ապահովվել է ԶԻՆԱՊԱՀԻ միջոցներով և **Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայի** ու **Արարատբանկի** ֆինանսական աջակցությամբ:

Օրվա ընթացքում մասնակիցներն օգտվել են այգու ատրակցիոններից և մասնակցել կազմակերպված հյուրասիրությանը: Միջոցառումը նպաստել է շահառու ընտանիքների ակտիվ ժամանցի ապահովմանը՝ երեխաներին և նրանց մայրերին պարգևելով ջերմ ու հիշարժան պահեր:

ԶԻՆԱՊԱՀԻ շահառուներին միտված աջակցման ծրագրեր՝ գործընկեր կազմակերպությունների հետ 2026թ. ԵՌ 2-ում

Շահառուների հետ հանդիպումներ

Հաշվետու ժամանակահատվածում ԶԻՆԱՊԱՀԸ Շիրակի և Սյունիքի մարզում կազմակերպել է թվով 85 շահառուների հետ հանդիպում՝ նպատակ ունենալով ամրապնդել հիմնադրամի առաքելությունը, խորացնել շահառուների հետ կապը և ներկայացնել նրանց իրավունքներին, հասանելի ծրագրերին և ծառայություններին վերաբերող կարևոր տեղեկատվություն:

Այս հանդիպումները կարևոր հարթակ են երկկողմ հաղորդակցության համար՝ հնարավորություն տալով շահառուներին բարձրաձայնել իրենց խնդիրներն ու հարցերը և ստանալ անմիջական պատասխաններ՝ կառուցվածքային հարցուպատասխանի ձևաչափով:

Հանդիպումների ընթացքում բարձրացված հիմնական հարցերն ու առաջարկությունները վերաբերում էին՝

- Ամսական հատուցումների տրամադրման ժամկետի հնարավոր երկարաձգմանը (20 տարվանից ավելի), և հատուցումների գումարների հնարավոր ինդեքսավորմանը՝ հաշվի առնելով առկա գնաճը,
- Բնակարանային ապահովման ծրագրերի անհրաժեշտությանը, ինչպես նաև բնակարանային վարկերի տոկոսների սուբսիդավորման հնարավորությանը՝ ԶԻՆԱՊԱՀԻ շահառուների համար,
- 2017 թվականից առաջ զոհված կամ անհայտ բացակայող ճանաչված զինծառայողների ընտանիքներին, ինչպես նաև վիրավորում ստացած զինծառայողներին միանվագ հատուցման տրամադրման հնարավորությանը:



Քննարկումները վերահաստատեցին, որ շահառուները շարունակում են առերեսվել մի շարք խնդիրների և մարտահրավերների, որոնք պահանջում են հստակեցում, շահերի ներկայացում և նպատակային աջակցություն:

Նման հանդիպումների միջոցով շարունակական ներգրավվածությունը մնում է կարևոր գործիք վստահության ձևավորման, առաջացող կարիքների բացահայտման և շահառուակենտրոն լուծումների մշակման համար: ԶԻՆԱՊԱՀԸ շարունակելու է հետևողականորեն իրականացնել այս նախաձեռնությունները՝ ապահովելու իր շահառուների համար երկարաժամկետ և նշանակալի ազդեցություն:

Համագործակցություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ՝ զինհաշմանդամություն ունեցող անձանց աջակցող միջոցներով ապահովելու նպատակով

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ԱՍՀՆ) հետ համագործակցությամբ՝ ԶԻՆԱՊԱՀԸ մեկնարկել է ծրագիր, որն ուղղված է զինհաշմանդամություն ունեցող շահառուներին աջակցող միջոցներով ապահովման, ինչպես նաև դրանց վերանորոգման ֆինանսավորմանը:

Ծրագրի անխափան իրականացումն ապահովելու նպատակով իրականացվել են մի շարք օրենսդրական փոփոխություններ, 2026թ. մայիսին եռակողմ պայմանագրեր են կնքվել ԶԻՆԱՊԱՀԻ, ՀՀ ԱՍՀՆ-ի և ԱՍՀՆ-ի կողմից հաստատված 28 մատակար կազմակերպությունների միջև:

Հաշվետու ժամանակահատվածում **32 հաշմանդամություն ունեցող զինծառայող ստացել է 42 աջակցող միջոց, իսկ 3 հաշմանդամություն ունեցող զինծառայողի** համար իրականացվել է նրանց աջակցող միջոցների **վերանորոգման 4 ծառայություն**:

Ընդհանուր առմամբ ծառայությունները մատուցվել են 9 մատակարարների կողմից՝ կազմելով **38,606,100 ՀՀ դրամ**:

Աջակցող ծրագրեր և Օգտակար հղումներ ենթաբաժինները Zinapah.am կայքում

ԶԻՆԱՊԱՀՆ ընդլայնել է իր թվային հասանելիությունը՝ zinapah.am կայքում **Աջակցող ծրագրեր** **և** **Օգտակար հղումներ** ենթաբաժինների ներդրման միջոցով:

Այս բաժինները պարբերաբար թարմացվող տեղեկատվություն են տրամադրում գործընկեր կազմակերպությունների կողմից առաջարկվող ծրագրերի և ՀՀ պետական նախաձեռնությունների վերաբերյալ՝ հնարավորություն ընձեռելով շահառուներին ուղղակիորեն դիմել կրթության, զբաղվածության և անձնային զարգացմանն ուղղված հնարավորություններին:

Հարթակն ակտիվորեն լուսաբանվել և առաջ մղվել մարզային հանդիպումների ընթացքում՝ դրա վերաբերյալ իրազեկվածությունն ու հասանելիությունն ապահովելու նպատակով:

Այս նախաձեռնությունն ամրապնդում է ԶԻՆԱՊԱՀԻ աջակցության էկոհամակարգը՝ բարելավելով ռեսուրսների հասանելիությունը և նպաստելով սոցիալ-տնտեսական վերաինտեգրմանը՝ երկարաժամկետ ու կայուն ազդեցություն ապահովելու հանձնառությանը համահունչ:

ԶԻՆԱՊԱՀԻ 2025թ. աուդիտն իրականացրել է ԲԵՅՔԵՐ ԹԻԼԼԻ ԱՐՄԵՆԻԱ ՓԲԸ-ն, իսկ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, որոնք հրապարակվել են Միջազգային հաշվապահական ստանդարտների խորհրդի (ՄՀՍԽ) կողմից: Դրանք պատրաստվել են այն ենթադրությամբ, որ Հիմնադրամը գործում է շարունակական հիմունքներով: Ամբողջական զեկույցը կարող եք գտնել ԶԻՆԱՊԱՀԻ կայքում:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծնթ.	31.12.2025	31. 12. 2024
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ		41,195	66,645
Ոչ նյութական ակտիվներ		66,703	50,869
Ներդրումային արժեթղթեր	4	11,600,337	10,500,290
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	5	48,673,629	38,495,371
		60,381,864	**49,113,175**
Ընթացիկ ակտիվներ			
Դեբիտորական պարտքեր և այլ ակտիվներ		5,363	19,988
Ներդրումային արժեթղթեր	4	4,577,351	848,631
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	5	87,761,785	61,228,055
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	6	3,590,835	1,881,288
		95,935,334	**63,977,962**
Ընդամենը ակտիվներ		**156,317,198**	**113,091,137**
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Պարտավորություններ հատուցումների գծով	7	135,560,333	145,563,759
Վարձակալության գծով պարտավորություն		-	3,664
		135,560,333	**145,567,423**
Ընթացիկ պարտավորություններ			
Պարտավորություններ հատուցումների գծով	7	18,075,657	17,944,955
Վարձակալության գծով պարտավորություն		5,370	21,774
Կրեդիտորական պարտքեր		22,090	27,375
		18,103,117	**17,994,104**
Զուտ ակտիվներ			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արժեթղթերի իրական արժեքի վերագնահատման պահուստ	8	735,915	112,168
Կուտակված վնաս		1,917,833	(50,582,558)
		2,653,748	**(50,470,390)**
Ընդամենը՝ պարտավորություններ և զուտ ակտիվներ		**156,317,198**	**113,091,137**

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծնթ.	2025թ.	2024թ.
Եկամուտներ			
Եկամուտ պարտադիր վճարներից և նվիրաբերություններից	9	49,353,718	45,650,543
Տոկոսային եկամուտ	10	12,571,532	9,338,679
Այլ եկամուտներ		12,650	518
		61,937,900	**54,989,740**
Ծախսեր			
Հատուցումների գծով ծախսեր	13	(1,160,553)	(20,541,220)
Հատուցումներ աշխատակիցներին		(182,541)	(162,068)
Մաշվածություն և ամորտիզացիա		(40,595)	(34,528)
Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի ծախս, զուտ	11	402,556	(583,819)
Ֆինանսական ծախս	12	(8,322,105)	(47,634,148)
Այլ ծախսեր		(133,927)	(122,781)
Փոխարժեքային տարբերություններից (վնաս)/օգուտ, զուտ		(344)	(240)
		(9,437,509)	**(69,078,804)**
Տարվա (վնաս)/շահույթ		**52,500,391**	**(14,089,064)**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Հոդվածներ, որոնք հետագայում կվերադասակարգվեն շահույթին կամ վնասին			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արժեթղթերի իրական արժեքի փոփոխությունից զուտ օգուտ/(վնաս)		634,058	90,983
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արժեթղթերի ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի փոփոխություններ		(10,311)	48,542
Տարվա այլ համապարփակ ֆինանսական եկամուտ/(ծախս)		**623,747**	**139,525**
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական (վնաս)/եկամուտ		**53,124,138**	**(13,949,539)**

ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար ՀՀ դրամ	Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արժեթղթերի իրական արժեքի վերագնահատման պահուստ	Կուտակված վնաս	Ընդամենը
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	**(27,357)**	**(36,493,494)**	**(36,520,851)**
Տարվա շահույթ	-	(14,089,064)	(14,089,064)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք	139,525	-	139,525
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	139,525	(14,089,064)	(13,949,539)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**112,168**	**(50,582,558)**	**(50,470,390)**
Տարվա շահույթ	-	52,500,391	52,500,391
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք	623,747	-	623,747
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	623,747	52,500,391	53,124,138
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**735,915**	**1,917,833**	**2,653,748**

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար ՀՀ դրամ	2025թ.	2024թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված պարտադիր վճարներ և նվիրատվություններ	49,354,302	45,650,768
Տրված հատուցումներ	(19,180,548)	(21,489,420)
Աշխատանքի վճարմանն ուղղված ծախսեր	(134,367)	(117,697)
Այլ ծախսեր	(214,024)	(209,373)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	**29,825,363**	**23,834,278**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(2,484)	(1,350)
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	(90,044,051)	(67,400,910)
Ներդրումներ պետական պարտքային արժեթղթերում	(2,933,005)	(6,460,138)
Ներդրումներ ոչ պետական պարտքային արժեթղթերում	(2,000,563)	(2,009,968)
Բանկերում տեղաբաշխված միջոցների մարում	56,553,636	41,556,497
Մուտքեր պետական պարտքային արժեթղթերում կատարված ներդրումների մարումից	650,000	-
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներից ստացված տոկոսներ	8,316,263	6,393,137
Պարտքային արժեթղթերում ներդրումներից ստացված տոկոսներ	1,344,394	450,000
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**(28,115,810)**	**(27,472,732)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ	**1,709,553**	**(3,638,454)**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբում	1,881,288	5,519,741
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(6)	1
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	**3,590,835**	**1,881,288**

ԶԻՆԱՊԱՀ®
ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ցանկանում ենք մեր խորին շնորհակալությունը հայտնել Հայաստանի և ամբողջ աշխարհի բոլոր անհատներին, կազմակերպություններին/համայնքներին, ովքեր կատարել են իրենց պարտադիր դրոշմանիշային վճարումները և անհատական նվիրատվությունները:

Ձեր աջակցության շնորհիվ ԶԻՆԱՊԱՀԸ կարողանում է իրականացնել իր առաքելությունը՝ հոգալ այն զինծառայողների և նրանց ընտանիքների կարիքները, ովքեր իրենց կյանքն ու առողջությունը զոհաբերել են հանուն Հայաստանի և նրա սահմանների անվտանգության:
ԶԻՆԱՊԱՀ

Միասին՝ զինվորիս կողքին...

ԶԻՆԱՊԱՀ®
ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԻԱՑԵՔ ՄԵԶ

ՃԱՆԱՉԵՔ ՄԵԶ

Իմացեք ավելին ԶԻՆԱՊԱՀԻ մասին։
Այցելեք մեր կայքը, հետևեք մեզ սոցիալական հարթակներում։

ԱՋԱԿՑԵՔ ՄԵԶ

Կատարեք ձեր նվիրատվությունը և աջակցեք զինվորներին ու նրանց ընտանիքներին, ովքեր զոհաբերել են ամենակարևորը՝ իրենց կյանքն ու առողջությունը հանուն Հայրենիքի։

ՊԱՏՄԵՔ ՄԵՐ ՄԱՍԻՆ

Պատմեք մեր առաքելության և կատարած աշխատանքի մասին։

ՆՎԻՐԱԲԵՐԵԼ

ԶԻՆԱՊԱՀ®

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԻԱՍԻՆ՝ ԶԻՆՎՈՐԻՍ ԿՈՂՔԻՆ...

@zinapah

zinapah.am

info@zinapah.am

Վազգեն Սարգսյան փող. 26/1
Երևան, 0010, ՀՀ

ՆՎԻՐԱԲԵՐԵԼ